Լուսնակը բակ ա բռնել

Լուսնակը բակ ա բռնել,
Լուսնակը բակ ա բռնել,
Մեր սարի վերա կըռնել,
Ախ, դու, դու դուլ, դուլ, դու դուլ,
Ջա՛ն, դու, դու դուլ, դուլ, դու դուլ:

Աղջիկ – տղի բանն ինչ ա,
Աղջիկ – տղի բանն ինչ ա՝
Ցատկել ու պարել, թռնել,
Ախ, դու, դու դուլ, դուլ, դու դուլ,
Ջա՛ն, դու, դու դուլ, դուլ, դու դուլ:

Գութանը վարափոսին,
Գութանը վարափոսին,
Շողքը դիպավ ակոսին,
Ախ, դու, դու դուլ, դուլ, դու դուլ,
Ջա՛ն, դու, դու դուլ, դուլ, դու դուլ:

Կարմիր խնձոր քաղել տամ,
Կարմիր խնձոր քաղել տամ,
Տարեք իմ աղբոր փեսին,
Ախ, դու, դու դուլ, դուլ, դու դուլ,
Ջա՛ն, դու, դու դուլ, դուլ, դու դուլ:

Լուսնակ, դու կամաց գնա,
Լուսնակ, դու կամաց գնա,
Մեր տան վերևով գնա,
Ախ, դու, դու դուլ, դուլ, դու դուլ,
Ջա՛ն, դու, դու դուլ, դուլ, դու դուլ:

Լուսնակը բոլորել է,
Լուսնակը բոլորել է,

Ամպի մեջ մոլորել է,
Ախ, դու, դու դուլ, դուլ, դու դուլ,
Ջա՛ն, դու, դու դուլ, դուլ, դու դուլ: